մտանէր առ նա, զի ի քսակ ևս տալիք լեալ էր թագաւորին ընծայուց, որ յԸռոճիկս պոստանճոցն հասանելոց էր, վասն որոյ պահէին նոքա և կային ընդ նմա։

Եւ յաւուր Պէնտէկոստէի Մայիսի Լ յայտնի մտանէր առ փաշան ցուցանելով նմա զհրաման թագաւորին և զպէրաթ, և նայ ընկալեալ սիրով՝ խիլայս զգեցուցանէր նմա և հեծուցեալ ի ձի զօրավարօք հանդերձ՝ երթայր նստէր ի վանս Սրբոյն Գէորգայ։

Յունիս ամիս օր Գշի։ Լու եղև աւուրքս՝ թէ ի գալն Ֆագլի փաշային[1]) անդ յէտրէնէ, որ ընդ պարոնին գնացեալ էր յՈւլախ՝ նստուցանել զնա անդ, և յորժամ անտի դարձեալ, ասէ, փառաւորեցաւ ի թագաւորէն և ի մօրէն. և նախանձեալ ընդ այն վէզիրին, պատճառ այլ իմն եդեալ՝ խեղդամահ առնէ զնա, զի մի առցէ զկնիք մեծի իշխանութեան, զի կին ունէր սայ զմեծ քոյր թագաւորին՝ զդուստր Իպրահիմին։

ԺԹ ամսոյ Շաբաթի աւուր եկին ուխտաւորքն ի Սուրբ Երուսաղէմայ։

Այգուցս (20 Յունէ) փաշան ի զօլ ելեալ ի շուկայս և ի փողոց քաղաքիս յորս սովորն են, և յանուանի տեղիս սահմանացն՝ ի հինգ տեղոջ մի մի մսածախս կախէր, որ զմեռած զուարակաց միսս ծախէին. քննեալ գտաւ ոմն տաճիկ և ոմն յոյն։

Լ[2]) ամսոյ Դշի աւուր պայրամ Տաճկաց, յոր աւուրքս եկն Աստուածատուր վարդապետն ի Սուրբ Երուսաղէմայ յՈւսկիւտար։

Եւ Թուման յահէ քաղաքացոց կրկին անգամ գնացեալ յէտրէնէ և էմր բերեալ առ զայմախամ, զի զամենայն ինչ զապտ առնել տացէ իւր եւ զհակառակորդս նորա մի տացէ խօսել ինչ թէ Դու ախմար ես,

1) փաշին. 2) ԻԹ.